Ծով aliz Բանուչյան

Պատերազմի նախորդ օրը

Պատերազմի նախորդ օրը,

երբ անձրևից թրջվելը երջանկություն էր,

և հնարավոր էր ուրախանալ չնչին բանից,

երևի ես դարձյալ տխուր էի

ինչ-որ հիմար պատճառով . . .

Իսկ հետո ժամանակը կանգ առավ,

իսկ հետո ականապատվեց սիրտս,

իսկ հետո պարզվեց, որ քնելը մեղք է,

երբ ամբողջ գիշեր հրետակոծվում է

քո բաժին տիեզերքը . . .

երբ նշան են բռնում լուսնի վրա,

որին նայելու իրավունք

պատսպարված երեխան չունի . . .

Իսկ հետո պարզվեց, որ պատերազմը այնքան

մեղավոր չէ, որքան խաղաղությունը, որը

դիտավորյալ, թե ոչ, բայց չի գալիս . . .

իսկ հետո պարզվեց, որ բոլորը,

բոլորը սպասում են

վերադարձի . . .

Եվ երբ ես իմացա, որ դու եկել ես, լաց եղա ուրախությունից,

որովհետև պատերազմի ժամանակ

հիշողությունը թակում է

նույնիսկ մեկընդմիշտ փակված դուռը՝

համոզվելու համար, որ ետևում կյանք կա . . .

Բայց այդ դռները բազմապատկվել են,

մենք թակում ենք նույնիսկ նրանց դռները, ում չենք ճանաչում . . .

և այդ դռների ետևում միշտ սպասում է . . .

իսկ պատերազմի նախորդ օրը՝ կորցրած երազանք . . .

Վաղը, երբ այս ամենն ավարտվի,

երբ խաղաղությունը բարեհաճի գալ,

ես ուզում եմ թրջվել անձրևից

և մինչև վերջին կաթիլը արցունք դառնալ

ու խաղաղվել . . .

ու խաղաղվել . . .

ու խաղաղվել . . .

02.11.2020